ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր ՝ ը

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 Թ._Ի ՕԳՈՍՏՈՍԻ 16_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Ֆիոլետովո համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2024 թ.-ի օգոստոսի 16-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆիոլետովո համայնքի 2024 թվականի օգոստոսի 16-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

3. Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության եվ կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին

4. Դմիտրի Տելեգինին սեփականության իրավունքով պատկանող հողամասում անասնաշենք կառուցելու նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

7. Ֆիոլետովո համայնքի բնակիչներին սոց օգնություն տրամադրելու մասին

8. Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգում առանձնացված արտաբյուջետային հաշիվ բացելու մասին

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի.

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19_Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Ֆիոլետովոհամայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ֆիոլետովո համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր.

Լոտ 1. Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0101-0107 ծածկագրով 0,086597 հա 2-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 120000 /հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 2 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0154-0007 ծածկագրով 4,36339 հա 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 2,270000 /երկու միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 3 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0154-0003 ծածկագրով 2,42437 հա 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 1,262000 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 4 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0160-0198 ծածկագրով 0,39039 հա 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 204000 /երկու հարյուր չորս հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 5 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0011-0014 ծածկագրով 0,016 հա բնակավայրերի հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 130000 / հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 6 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0117-0013 ծածկագրով 0,1652 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 112000 / հարյուր տասներկու հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 7 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0007-0051 ծածկագրով 0,02561 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 204000 / երկու հարյուր չորս հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 8 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0117-0013 ծածկագրով 0,1652 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 112000 / հարյուր տասներկու հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամաս՝ 1 լոտով -

Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0130-0127 ծածկագրով 0.068373 հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի արոտավայր ՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով՝ 25 տարի ժամկետով:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 4000 / չորս հազար/ ՀՀ դրամ: Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին
ԴՄԻՏՐԻ ՏԵԼԵԳԻՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՆԱՍՆԱՇԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Դմիտրի Տելեգինի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Դմիտրի Տելեգինին սեփականության իրավունքով պատկանող 06-0113-0124-0005 ծածկագրով 0,100334 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսք, անասնաշենքկառուցելու և սպասարկման նպատակով փոխադրեք արդյունաբերական, ընդերքօգտագործման և արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարության 23.10.2000թ-ի «Հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 9-րդ կետով և հիմք ընդունելով Ֆիոլետովո համայնքի հողերի փոփոխությունների վերաբերյալ հողաշինարարի կողմից տրված տեղեկանքը, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2024թ-ի դրությամբ՝ համաձայի հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹԹ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից.

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով՝ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Տալ համաձայնություն Ֆիոլետովո համայնքի Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգում բացել առանձնացված արտաբյուջետային ծախսային

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈԽԻՆՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

ՄԻԽԱԻԼ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Ը _____